ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների և Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններում դատավորների թվաքանակի ավելացման անհրաժեշտությունը պայմանավորված է ստորև ներկայացվող պատճառներով.

2013 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է **4039** քրեական գործ, **2014 թվականի ընթացքում՝ 4021** քրեական գործ:

2013 թվականի ընթացքում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է **1518** քրեական գործ, **2014 թվականի ընթացքում՝ 1487** քրեական գործ:



Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում առկա է **քրեական մասնագիտացում ունեցող դատավորի 23 հաստիք**:

Հետևաբար, Երևան քաղաքում քրեական մասնագիտացում ունեցող մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը **2013 թվականին** կազմել է **66** քրեական գործ, իսկ **2014 թվականին՝** մոտ **65** քրեական գործ: Այսպիսով, վերջին երկու տարիների կտրվածքով Երևան քաղաքում մեկ դատավորի **տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 65 գործ** /66+65=131:2=65.5/:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է **242** քրեական գործ, իսկ **2014 թվականի ընթացքում՝ 275** քրեական գործ:



Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում առկա է քրեական մասնագիտացում ունեցող դատավորի **3 հաստիք**:

Հետևաբար, **2013 թվականին** Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացում ունեցող մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է **81** քրեական գործ, իսկ **2014 թվականին՝ 92** քրեական գործ:



Այսպիսով, տվյալ դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունն ուսումնասիրվող ժամանակահատվածում գերազանցում է Երևան քաղաքում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությանը:

Ինչպես նշվեց վերը, վերջին երկու տարիների կտրվածքով Երևան քաղաքում քրեական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 65 քրեական գործ, մինչդեռ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ **մոտ 86 գործ** /81+92=173:2=86.5/:



Այսպիսով, տվյալ դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունն ավել է Երևան քաղաքում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունից **1.3 անգամ**:

Հետևաբար, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քրեական մասնագիտացում ունեցող մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը Երևան քաղաքում քրեական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է քրեական մասնագիտացում ունեցող դատավորի լրացուցիչ 2 հաստիք, որի արդյունքում քրեական մասնագիտացում ունեցող դատավորների թիվը կկազմի 5:

Բացի վերը նշվածը, հարկ է նկատի ունենալ, որ **2013 թվականին** Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է **1274** մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող միջնորդություն (այսուհետ՝ Միջնորդություն), իսկ **2014 թվականին՝ 1679** միջնորդություն:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ **2015 թվականի ապրիլի 30-ի դրությամբ** Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում արդեն իսկ ստացվել է **163** քրեական գործ, որը կազմում է **2014 թվականին ստացված քրեական գործերի թվի 59.2%-ը,** ինչպես նաև **1052** Միջնորդություն, որը կազմում է **2014 թվականի ընթացքում ստացված միջնորդությունների թվի 62.6%-ը:**

2013 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է **48540** քաղաքացիական գործ, իսկ **2014 թվականի ընթացքում՝ 85772** քաղաքացիական գործ:

2013 թվականի ընթացքում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է **24636** քաղաքացիական գործ, իսկ **2014 թվականի ընթացքում՝ 41671** քաղաքացիական գործ:



Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում առկա է **քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորի 39 հաստիք**:

Հետևաբար, Երևան քաղաքում քաղաքացիական մասնագիտացում ունեցող մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը **2013 թվականին** կազմել է **632** քաղաքացիական գործ, իսկ **2014 թվականին՝ 1068** քաղաքացիական գործ:

Այսպիսով, վերջին երկու տարիների կտրվածքով Երևան քաղաքում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է **850** քաղաքացիական գործ /632+1068=1700:2=850/:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է **2786** քաղաքացիական գործ, իսկ **2014 թվականի ընթացքում՝ 5033** քաղաքացիական գործ:



Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում առկա է քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորի **3 հաստիք**:

Հետևաբար, **2013 թվականին** Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի քաղաքացիական մասնագիտացում ունեցող մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է **928** գործ, իսկ **2014 թվականին՝ 1677** գործ:



Ինչպես նշվեց վերը, վերջին երկու տարիների կտրվածքով Երևան քաղաքում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է **850** քաղաքացիական գործ, մինչդեռ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ մոտ **1302** քաղաքացիական գործ /928+1677=2605:2=1302.5/:



Այսպիսով, տվյալ դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունն ավել է Երևան քաղաքում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունից **1.5 անգամ**:

Հետևաբար, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի քաղաքացիական մասնագիտացում ունեցող մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը Երևան քաղաքում քաղաքացիական մասնագիտացում ունեցող մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորի լրացուցիչ 2 հաստիք, որի արդյունքում քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորների թիվը կկազմի 5:

Հարկ է նաև նշել, որ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում **2014 թվականի ընթացքում** ստացվել է **214** սնանկության վերաբերյալ գործ, **4441** վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործ:

Բացի այդ, **2015 թվականի ապրիլի 30-ի դրությամբ** Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում արդեն իսկ ստացվել է **4834** քաղաքացիական գործ, որը կազմում է **2014 թվականին ստացված քաղաքացիական գործերի թվի 96%-ը:**

Առաջարկվող լուծումները

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ավելացնելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն, ինչպես նաև Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններում դատավորների թվակազմը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Ակնկալվող արդյունք

Ներկայացված նախագծով նախատեսվող փոփոխությունների արդյունքում էականորեն կթեթևանա Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն, ինչպես նաև Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններում դատավորների ծանրաբեռնվածությունը, ինչն էլ իր հերթին կնպաստի գործերը ողջամիտ ժամկետում քննելուն: